ՏԵՂԵԿԱԳԻՐ Ա, Բ, Գ, Դ, 1900 թ.

(Вѣдомость А, Б, В, Г, 1900 г.)

(Շարունակութիւն *)

Գ.

ՂԱՐԱԲԱՂԻ ԹԵՄ

Գանձակ նահանգի եւ նոյն գաւառի Շուշի քաղաքում— 4 եկեղ., 1 կուսանաց վանք, 1 եպիսկոպոս, 2 վարդապետ, 3 կոյս, 19 քահանայ, 7 եկեղեցական սպասաւոր, 7052 արական, 7232 իգ., ընդամ. 14284 ծխկ., իգականը շատ է արականից 180 ով: Մի եկեղեցուն ընկնում է 3571 ծխկ., մի քահանային 752 ծխական: 4 եկեղեցին միասին ունին 14977 ր. 15½ կ. դրամագլուխ, 5885 ր. 91½ կ. տարեկան մուտք, 4966 ր. 42 կ. տար. ելք: Կուսանաց վանքն ունի 300 ր. դրամագլուխ, 185 ր. 20 կ. մուտք, 185 ր. 20 կ. ելք: 1 թեմական դպրանոց 17 ուսուցչով և (?) աշակերտով:

Շուշի, Ջիբրայիլ եւ Ջիւանշիր գաւառների 168 *հայաբնակ գիւղում*—153 *եկեղեցի*, 10 *վանք*, 166 *քահանայ*, 25 *եկեղեց. սպասաւոր*, 60522 *արական*, 47693 *իգական*, *ընդամ.* 108215 *ծխական*, *արականը շատ է իգականից* 12829 *ով*: *Մի եկեղեցուն ընկնում է* 707 *ծխական*, *մի քահանային* 649 *ծխկ.*: 153 *եկեղեցին միասին ունին* 11290 *ր.* 82 *կ. դրամագլուխ*, 2706 *ր.* 69 *կ. մուտք*, 2119 *ր.* 23 *կ. ելք*: 10 *վանքը միասին ունին* 79 *ր.* 13 *կ. դրամագլուխ*, 6631 *ր.* 19 *կ. մուտք*, 6403 *ր*, 90 *կ. ելք*:

Նուխի գաւառի Նուխի քաղաքում — 2 *եկեղեցի*, 1 *վարդապետ*, 5 *քահանայ*, 4 *եկեղ. սպաս.*, 1859 *արական*, 1567 *իգական*, *ընդամ.* 3426 *ծխական*, *արականը շատ է իգականից* 292 *ով*: *Մի եկեղեցուն ընկնում է* 1713 *ծխակ.*, *մի քահանային* 856 *ծխական*: 2 *եկեղեցիներն միասին ունին*

---

* Տես Արարատ 1902 թ. յունուար:

10857 ր. 41 կ. դրամագլուխ, 885 ր. 96 կ. մուտք, 878 ր. 51 կ. ելք։

Նոյն գաւառի 50 հայաբնակ գիւղում — 48 եկեղեցի, 2 վանք, 45 քահանայ, 2 եկեղ. սպասաւոր, 16549 արական., 14766 իգական., ընդամենը 31315 ծխական. արականը շատ է իգականից 1783 ով։ Մի եկեղեցուն ընկնում է 652 ծխական., մի քահանային 696 ծխական։ 48 եկեղեցին միասին ունին 8160 ր. 37 կ. դրամագլուխ, 1386 ր. 54 կ. մուտք, 1270 ր. 16 կ. ելք. վանքերի ունեցածը յայտնի չէ։

Բազու նահանգի Հենքորան գաւառի Հենքորան քաղաքում — 1 քահանայ, 1 եկեղեցի. այլևս ոչինչ յայտնի չէ։

Ըստ այսմ ամբողջ Ղարաբաղի թեմում կայ 208 եկեղ., 13 վանք, 1 եպիսկոպոս, 3 վարդապետ, 3 կոյս, 236 քահանայ, 38 եկեղեց. սպասաւոր. 85982 արական, 71258 իգական, ընդամ. 157240 ծխական, որից 17710 քաղաքաբնակ, 139530 գիւղաբնակ։ Մի եկեղեցուն ընկնում է միջին թուով 756 ծխական, մի քահանային 666 ծխական։ 208 եկեղ. միասին ունին 45285 ր. 75½ կ. դրամագլուխ, 10865 ր. 10½ կ. տար. մուտք, 9234 ր. 32 կ. ելք։ 13 վանքը միասին ունին 379 ր. 13 կ. դրամագլուխ, 6816 ր. 39 կ. մուտք, 6589 ր. 10 կ. ելք։ 1 թեմական դպրանոց։

Դ.

ՇԱՄԱԽՈՒ ԹԵՄ

Բազու նահանգի եւ նոյն գաւառի Բազու քաղաքում — 2 եկեղ., 1 վարդապետ, 11 քահանայ, 2 եկեղ. սպասաւոր, 3973 արական, 3697 իգական, ընդամ. 7670 ծխական. արականը իգականից շատ է 276 ով։ Մի եկեղեցուն ընկնում է 3835 ծխակ., մի քահանային 697 ծխակ.։ 2 եկեղեցին միասին ունին 49445 ր. 29 կ. դրամագլ., 25937 ր. 19 կ. մուտք, 11886 ր. 35 կ. ելք։ Ծխականների թիւը մեր կարծիքով չափազանց քիչ է ցոյց տրուած։

Շամախու գաւառի Շամախի քաղաքում—2 եկեղեցի, 1 եպիսկոպոս, 1 վարդապետ, 1 քահանայ, 3 եկեղեցական սպասաւոր, 2066 արական, 2026 իգական, ընդամենը 4092 Ծխական, արականը շատ է իգականից 40 ոգի։ Մի եկեղեցուն և մի քահանային ընկնում է 4092 Ծխական, 2 եկեղեցին միասին ունին 9202 ր. 24 կ. դրամագլուխ, 638 ր. 72 կ. մուտք, 1253 ր. 27 կ. ելք։

Նոյն գաւառի 23 հայաբնակ գիւղում—13 եկեղեցի, 2 վանք, 11 քահանայ, 7768 արական, 6621 իգական, ընդամ. 14389 Ծխական. արականը իգականից շատ է 1147 ոգի։ Մի եկեղեցուն ընկնում է 1107 Ծխական, մի քահանային 1308 Ծխական, 13 եկեղեցին միասին ունին 10484 ր. 59 կ. դրամագլուխ, 1270 ր. 33 կ. մուտք, 961 ր. 57 կ. ելք։ 2 վանքը միասին ունին 3 ր. դրամագլուխ, 1177 ր. 37 կ. մուտք, 1179 ր. 98 կ. ելք։

Գեօքչայի գաւառի 21 հայաբնակ գիւղում—17 եկեղ., 11 քահանայ, 7989 արական, 6826 իգական, ընդամ. 14815 Ծխ., արականը շատ է իգականից 1163 ոգի։ Մի եկեղեցուն ընկնում է 1347 Ծխական, մի քահանային 871 Ծխական, 17 եկեղեցին միասին ունին 8389 ր. 66 կ. դրամագլուխ, 764 ր. 25 կ. մուտք, 891 ր. 19 կ. ելք։

Ղուբայի գաւառի Ղուբա քաղաքում—1 եկեղեցի, 2 քահանայ, 390 արական, 428 իգական, ընդամ. 818 Ծխական. իգականը շատ է արականից 38 ոգի։ Մի եկեղեցուն ընկնում է 818 Ծխական, մի քահանային 409 Ծխական։ Եկեղեցին ունի 16095 ր. 85 կ. դրամագլուխ, 1021 ր. 73 կ. մուտք, 1149 ր. 53 կ. ելք։

Նոյն գաւառի 2 հայաբնակ գիւղում—2 եկեղեցի, 3 քահանայ, 337 արական, 222 իգական, ընդամ. 559 Ծխական. արականը շատ է իգականից 115 ոգի։ Մի եկեղեցուն ընկնում է 279 Ծխական, մի քահանային 186 Ծխական, 2 եկեղեցին միասին ունին 1585 ր. 55 կ. դրամագլուխ, 85 ր. 25 կ. մուտք, 11 ր. 40 կ. ելք։

Դաղստանի շրջանի Դերբենտ քաղաքում—1 եկեղեցի, 1 քահանայ, 1 եկեղ. սպասաւոր, 314 արական, 386 իգական,

ընդամ. 700 Ծխական. իգականը շատ է արականից 72 ով։ Եկեղեցին ունի 5007 ր. 94 կ. դրամագլուխ։ 1298 ր. 75 կ. մուտք։ 938 ր. 8 կ. ելք։

Բնակ այսմ ամբողջ Նամախու թեմում կայ 38 եկեղ.։ 2 վանք։ 1 եպիսկոպոս։ 2 վարդապետ։ 40 քահանայ։ 6 եկեղ. սպասաւոր։ 22837 արական։ 20206 իգակ.։ ընդամ. 43043 Ծխական։ որից 13280ը քաղաքացի։ 29763ը գիւղացի։ Մի եկեղեցուն ընկնում է միջին թուով 1133 Ծխական։ մի քահանային 1076 Ծխական։ 38 եկեղեցին միասին ունին 100211 ր. 12 կ. դրամագլուխ։ 31016 ր. 22 կ. մուտք։ 17091 ր. 39 կ. ելք տարեկան։ 2 վանքը միասին ունին 3 ր. դրամագլուխ։ 1177 ր. 37 կ. մուտք։ 1179 ր. 98 կ. ելք։

Ե.

ԱՍՏՐԱԽԱՆԻ ԹԵՄ

Աստրախան նահանգի Աստրախան քաղաքում — 5 եկեղեցի։ 1 արքեպիսկոպոս։ 10 քահանայ։ 9 եկեղեցական սպասաւոր։ 3852 արական։ 3951 իգակ.։ ընդամենը 7803 Ծխական։ իգականը արականից շատ է 99 ով։ Մի եկեղեցուն ընկնում է 1560 Ծխական։ մի քահանային 780 Ծխական։ 5 եկեղեցին միասին ունին 177,667 ր. 22 կ. դրամագլուխ։ 24116 ր. 16 կ. մուտք։ 30750 ր. 8 կ. ելք տարեկան։ Կայ 1 անկելանոց։ ուր պատսպարւում են 17 արական։ 27 իգական։ ընդամենը 44 Ծխական։

Նիժեգորոդեան նահանգի Նիժնի Նովգորոդ քաղաքում (*տոնավաճառանոցում*) — 1 եկեղեցի։ որը ունի 12942 ր. 50 կ. դրամագլուխ։ 790 ր. մուտք։ 940 ր. 53 կ. ելք տարեկան։

Տաւրիդայի նահանգում — 6 եկեղ.։ 7 քահանայ։ 7 եկ. սպասաւոր։ 4164 արական։ 3747 իգական։ ընդամ. 7911 Ծխակ.։ արականը շատ է իգականից 417 ով։ Մի եկեղեցուն

ընկնում է 1318 ծխական, մի քահանային 1130 ծխական։ 6 եկեղեցին միասին ունին 20693 ր. 70 կ. դրամագլուխ, 5568 ր. 64 կ. մուտք, 4601 ր. 37 կ. ելք։

Թերեքեան շրջանում — 12 եկեղ., 19 քահ., 15 եկ. սպասաւոր, 5662 արական, 4840 իգական, ընդամ. 10502 ծխական. արականը իգականից շատ է 822 ով։ Մի եկեղեցուն ընկնում է 875 ծխական, մի քահանային 553 ծխական, 12 եկեղեցին ունին միասին 213541 ր. 63 կ. դրամագլուխ, 21860 ր. մուտք, 20711 ր. 27 կ. ելք տարեկան։

Կուբանեան շրջանում — 6 եկեղեցի, 11 քահանայ, 9 եկեղ. սպաս., 4085 արակ., 3744 իգակ., ընդամ. 7829 ծխկն., արականը իգականից շատ է 341 ով։ Մի եկեղեցուն ընկնում է 1305 ծխակ., մի քահանային 713 ծխակ.։ 6 եկեղեցին միասին ունին 62007 ր. 12 կ. դրամագլուխ, 13941 ր. 32 կ. մուտք, 15260 ր. 32 կ. ելք։

Դաղստանի շրջանում — 2 եկեղ., 2 քահանայ, 267 արակ., 288 իգական, ընդամենը 555 ծխական։ Իգականը արականից շատ է 21 ով։ Մի եկեղեցուն ընկնում է 277 ծխկ., մի քահանային նոյնպէս։ 2 եկեղեցին միասին ունին 3458 ր. 39 կ. դրամագլ., 695 ր. մուտք, 720 ր. 80 կ. ելք։

Անդրկասպեան երկրում — 4 եկեղեցի, 5 քահանայ, 4 եկեղ. սպասաւոր, 1826 արակ., 1700 իգակ., ընդամ. 3526 ծխական. արականը շատ է իգականից 126 ով։ Մի եկեղեցուն ընկնում է 882 ծխական, մի քահանային 705 ծխական։ 4 եկեղեցին միասին ունին 10121 ր. 80 կ. դրամագլուխ, 2745 ր. 85 կ. մուտք, 3301 ր. 75 կ. ելք։

Թուրքեստանի շրջանում — 1 եկեղեցի, 1 քահանայ, 1 եկեղ. սպաս., 280 արական, 194 իգական, ընդամ. 474 ծխակ., արականը իգականից շատ է 86 ով։ Մի եկեղեցուն և քահանային ընկնում է 474 ծխակ.։ Եկեղեցին ունի 24 ր. 18 կ. դրամագլուխ, 1112 ր. մուտք, 1088 ր. 17 կ. ելք։

Սարատովի նահանգում — 1 եկեղեցի, 1 քահանայ, 1 եկեղ. սպասաւոր, 103 արական, 98 իգական, ընդամ. 201 ծխկ., արականը իգականից շատ է 5 ով։ Մի եկեղեցուն

և քահանային ընկնում է 201 ծխական։ Եկեղեցու դրամագլուխը, մուտքն ու ելքը չկայ։

Սիբիրիայում — 1 եկեղեցի, 1 քահանայ, 158 արական, 42 իգական, ընդամենը 200 ծխական, արականը իգականից շատ է 116 ով։ Մի եկեղեցուն և քահանային ընկնում է 200 ծխական։ Եկեղեցու մուտքն ու ելքը յայտնի չէ։

Ուրեմն ամբողջ Աստրախանի թեմում կայ 39 եկեղ., 1 արքեպիսկոպոս, 57 քահանայ, 46 եկեղ. սպաս., 20397 արական, 18604 իգական, ընդամ. 39001 ծխական, որից 29622 ը քաղաքաբնակ, 9379 ը գիւղաբնակ։ Մի եկեղեցուն ընկնում է միջին թուով 1003 ծխական, մի քահանային 686 ծխական, 39 եկեղեցին ունին միասին 500456 ր. 54 կ. դրամագլուխ, 70928 ր. 97 կ. տարեկան մուտք, 77374 ր. 29 կ. ելք։ Կայ 1 անկելանոց, ուր պատսպարւում են 17 արական, 27 իգական, ընդամենը 44 ծխական։

Զ.

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԵՒ ԲԵՍԱՐԱԲԻԱՅԻ ԹԵՄ

Բեսարաբիայի նահանգում — 6 եկղ., 1 արքեպիսկոպոս, 1 վարդապետ, 5 քահանայ, 6 եկեղ. սպաս., 661 արական, 783 իգական, ընդամ. 1444 ծխ., իգականը շատ է արականից 122 ով։ Մի եկեղեցուն ընկնում է 241 ծխական, մի քահանային 289 ծխ.։ 6 եկեղեցին միասին ունին 16215 ր. 32 կ. դրամագլուխ, 4206 ր. 97 կ. մուտք, 3203 ր. 89 կ. ելք։

Ղեբրոնի նահանգում — 3 եկեղ., 4 քահանայ, 3 եկեղ. սպասաւոր, 780 արական, 590 իգական, ընդամ. 1370 ծխ., արականը իգականից շատ է 190 ով։ Մի եկեղեցուն ընկնում է 457 ծխական, մի քահանային 342 ծխական։ 3 եկեղեցին միասին ունին 9735 ր. 50 կ. դրամագլուխ, 2550 ր. 75 կ. մուտք, 929 ր. 88 կ. ելք։

Ս. Պետերբուրգ մայրաքաղաքում — 2 եկեղեցի, 1 վարդապետ, 2 քահանայ, 4 եկեղ. սպասաւոր, 386 արական, 195 իգական, ընդամ. 581 ծխական, արականը իգականից շատ է 191 ով։ Մի եկեղեցուն ընկնում է 290 ծխական, մի քահանային նոյնպէս։ 2 եկեղեցին միասին ունին 260242 ր. 42 կ. դրամագլուխ, 117019 ր. 59 կ. մուտք, 84451 ր. 2 կ. ելք։

Մոսկուա մայրաքաղաքում — 3 եկեղեցի, 2 քահանայ, 3 եկեղ. սպասաւոր, 442 արական, 327 իգական, ընդամենը 769 ծխական, արականը շատ է իգականից 115 ով։ Մի եկեղեցուն ընկնում է 256 ծխական, մի քահանային 384 ծխ.։ 3 եկեղեցին միասին ունին 30821 ր. 25 կ. դրամագլուխ, 17749 ր. 82 կ. մուտք, 25358 ր. 42 կ. ելք։ Կայ 1 անկելանոց, ուր պատսպարւում են 1 արական, 17 իգական, ընդամենը 18 ծխական։

Դոնեան զօրաց շրջանում — 14 եկեղեցի, 1 վանք, 2 վարդապետ, 32 քահանայ, 32 եկեղ. սպաս., 4701 արական, 4509 իգական, 9210 ծխական, արականը շատ է իգականից 192 ով։ Մի եկեղեցուն ընկնում է 658 ծխական, մի քահանային 257 ծխական։ 14 եկեղ. միասին ունին 26451 ր. 80 կ. դրամագլուխ, 32909 ր. 17 կ. մուտք, 24623 ր. 15 կ. ելք։ Վանքը ունի 167 ր. 94 կ. դրամագլ., 4912 ր. 19 կ. մուտք, 4744 ր. 25 կ. ելք։ Կայ 1 թեմական դպրանոց 289 աշակերտով և 17 ուսուցչով։ 1 անկելանոց, ուր պատսպարւում են 20 արական, 40 իգական, ընդամենը 60 ծխական։

Խարքովի նահանգում — 1 վարդապետ, 1 եկեղ. սպաս., 120 արական, 95 իգական, ընդամենը 215 ծխ., արականը իգականից շատ է 25 ով։

Տաւրիկեան նահանգում — 14 եկեղ., 2 վանք, 1 վարդապետ, 10 քահանայ, 13 եկեղ. սպասաւոր, 1834 արական, 1912 իգական, ընդամ. 3746 ծխական, իգականը արականից շատ է 78 ով։ Մի եկեղեցուն ընկնում է 268 ծխական, մի քահանային 375 ծխական։ 14 եկեղեցին միասին ունին 4158 ր. 80 կ. դրամագլուխ, 9078 ր. 23 կ. մուտք, 7341

ր. 19 կ. եկք։ 2 վանքը միասին ունին 611 ր. 56 կ. դրամագլուխ, 1350 ր. 94 կ. մուտք, 1714 ր. 62 կ. եկք։

Եկատարինոսլաւեան նահանգում — 1 եկեղեցի, 1 քահանայ, 1 եկեղ. սպասաւոր, 200 արական, 125 իգական, ընդամ. 325 ծխական, արականը իգականից շատ է 75 ով։ Մի եկեղեցուն և մի քահանային ընկնում է 325 ծխական։ Եկեղեցին ունի 2584 ր. 68 կ. դրամագլուխ, մուտքն ու եկքը յայտնի չէ։

Ըստ այսմ ամբողջ Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմում կայ 43 եկեղեցի, 3 վանք, 1 արքեպիսկոպոս, 6 վարդապետ, 56 քահանայ, 63 եկեղ. սպասաւոր, 9124 արական, 8536 իգական, ընդամենը 17660 ծխական, որից 12904 ը քաղաքաբնակ, 4756 ը գիւղաբնակ։ Մի եկեղեցուն ընկնում է միջին թուով 411 ծխական, 1 քահանային 315 ծխ.։ 43 եկեղեցին միասին ունին 350209 ր. 77 կ. դրամագլուխ, 183514 ր. 53 կ. տարեկան մուտք, 145907 ր. 55 կ. եկք։ 3 վանքը միասին ունին 779 ր. 50 կ. դրամագ., 6263 ր. 13 կ. մուտք, 6458 ր. 87 կ. եկք։ Կայ 1 թեմական դպրանոց 289 աշակերտով և 17 ուսուցչով. 2 անկելանոց 21 արական, 57 իգական, ընդամենը 78 պատրաստարուածներով։

Այն տեղեկագրի համեմատ ամբողջ Ռուսաստանի 6 հայ լուսաւորչական թեմում կայ 1327 եկեղեցի, 79 վանք, 7 եպիսկոպոս, 34 վարդապետ, 1547 քահանայ, 360 եկեղ. սպասաւոր, 600483 արական, 530991 իգական, ընդամենը 1131474 ծխական, որից 217133 ը քաղաքաբնակ, 914341 ը գիւղաբնակ։

Միջին թուով մի եկեղեցուն ընկնում է 853 ծխական, մի քահանային 731 ծխական։

1327 եկեղեցին միասին ունին 1522513 ր. 45½ կ. դրամագլուխ, 478472 ր. 71½ կ. տարեկ. մուտք, 393636 ր. 35 կ. տարեկան եկք։

79 վանքը միասին ունին 5746 ր. 61 կ. դրամագլուխ,

43762 ր. 96½ կ. տարեկան մուտք, 45248 ր. 11 կ. տարեկան ելք։

Ամբողջ Ռուսաստանում կայ 4 թեմական դպրանոց, 3 անկելանոց։

Առանձին ուշադրութիւն դարձնելով ծխականների թուի վերայ և այն համեմատելով այլ աղբիւրներից վերցրած թուերի հետ՝ կարելի է եզրակացնել, որ տեղ տեղ տեղեկագրում ծխականների թիւը իրականից շատ է ցոյց տրուած, իսկ տեղ տեղ ընդհակառակն սակաւ։ Այսպէս օրինակ. տեղեկագրում նշանակուած է Աղեքսանդրապոլ քաղաք—14773 արական, 13058 իգական, ընդամ. 27831 ծխական. այն ինչ բարձր. Տ. Մատթէոս վարդապետը իր 1900 թուին կազմած ցուցակում գնում է նոյն տեղում 9227 արական, 9229 իգական, ընդամենը 18456 ծխական։ Տեղեկագրում Աղեքսանդրապոլի գիւղերի համար նշանակուած է 61514 արական. 57331 իգական, ընդամենը 118845 ծխակ. իսկ վերոյիշեալ ցուցակում նոյն գիւղերի համար գրուած է 57272 արական. 51992 իգական, ընդամ. 109264 ծխական։ Նոյն գիւղերի համար բարեկ. Տ. Ներսէս քահ. Նիկողոսեանը (տես Մուրճ № 8, 1901 թ.) գնում է 57342 արական, 52018 իգական, ընդամ. 109,360 ծխական։ Անշուշտ սոյն թուերը նոյնպէս անպայման ճիշդ համարել չէ կարելի, քանի որ կազմուած են համարեա նոյն եղանակով, ինչպէս և մեր առաջ գրուած տեղեկագիրը և ստուգուած գիւղական դատարաններում գտնուած ընտանեկան ցուցակներից, որոնք կազմուած են 1886 թուին. բայց և այնպէս սոյն թուերը տեղեկագրի մէջ բերուածներից աւելի մօտ ենք համարում իրականութեան։

Տեղեկագրում Շամախու թեմի ծխականների թիւը նշանակուած է 22837 արական, 20206 իգական, ընդ ամ. 43043 ծխական, որից 700 ը Դաղստանի Երջանի Դերբենտ քաղաքում, իսկ մնացած 42343 ը Բագուայ նահանգում։ Այն ինչ Լ. Պ. Զագուրսկու գեռ ևս 1886-ին կազմած ցուցակով Բագու նահանգում կար մօտաւորապէս 55000 հայ լու-

սաւորչական։ Ուստի և մեզ թւում է որ այս թեմում ծխականների թիւը չափազանց պակաս է ցոյց տրուած։

Նոյնը պէտք է ասենք Աստրախանի և մանաւանդ Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի համար, ուր ծխականների թիւը ըստ տեղեկագրի է 9124 արական, 8536 իգական, ընդամ. 17660 ծխական, այն ինչ, եթէ չենք սխալւում, Դեր. Յուսիկ եպիսկոպոսի դեռ ևս 1895 թուին կազմած ցուցակում ծխականների թիւը այդ թեմում անց էր կենում 25000-ից։ Ափսոս որ այդ ցուցակը ձեռքի տակ չունինք։

Իսկ ինչ վերաբերում է ամբողջ Ռուսաստանի հայ լուսաւորչական ծխականների ընդհանուր թուին, որ տեղեկագրում ցոյց է տրուած 600483 արական, 530991 իգական, ընդամ. 1131474 ծխական, պէտք է ասենք, որ այդ թիւը մեր կարծիքով իրականութեան մօտ է, յամենայն դէպս հաւանական է, որ իրականութիւնից աւելի սակաւ է ցոյց տրուած, քան թէ շատ։ 1901 թուի «Кавказскій календарь»ում տպուած է Լ. Պ. Զագուրսկու 1886-ին կազմած ցուցակը, որից քաղում ենք համեմատութեան համար հետևեալ թուերը։ 1886-ին կար Թիֆլիսի նահանգում 193610 հայ, Քութայիսի նահանգում 16399, Երևանի նահանգում 375700, Գանձակի նահանգում 258324, Բաղուայ նահանգում 55459, Դաղստանի շրջանում 1054, Կարսի շրջանում 37094, Սև-Ծովեան նահանգում 970, Զաքաթալայի շրջանում 521, Թերեքեան շրջանում 13721, Կուբանեան շրջանում 13095, Աստրապոլի նահանգում 4709, ընդամենը 970656 հոգի ամբողջ Կովկասում. այն թիւը վերաբերում է բացի լուսաւորչականներից նաև կաթոլիկ և բողոքական հայերին, որոնց թիւը 1886-ին կազմուած ընտանեկան ցուցակով էր մօտաւորապէս 31200, որը հանելով 970656-ից, միայն լուսաւորչական հայերի թիւը մնում է 939456։ Իսկ 1900 թուի Ա. Բ. Գ. Դ. տեղեկագրի համեմատ լուսաւորչական հայերի (կաթոլիկ և բողոքական հայերը հաշուի առնուած չեն) թիւը ամբողջ Կովկասում 1900 թուին էր ընդամենը 1101710 հոգի (իսկ Կովկասից

դուրս 29764 հ.)։ Եթէ ի նկատի առնենք, որ 1886-ից մինչև 1900 թիւը տարեկան մօտաւորապէս $1\frac{1}{2}\%$ բազմանալով 939456ը կարող էր դառնալ 1900-ին 939456+225000= 1164456, կտեսնենք, որ տեղեկագրում հայերի թիւը Կովկասում համեմատաբար աւելի քիչ է ցոյց տրուած։ Կովկասից դուրս, Ռուսաստանում, Բեսարաբիայի թեմում նոյնպէս տեսանք, որ ծխականների թիւը պակաս է ցոյց տրուած. ուստի և ամբողջ Ռուսաստանում հայ ծխականների 1131474 թիւը ըստ մեզ իրականութիւնից շատ հեռու չէ։ Ինչպէս տեսանք Ռուսաստանում մի եկեղեցուն ընկնում է միջին թուով 853 ծխ., մի քահանային 731 ծխական. մեր կարծիքով սոյն թուերն էլ մօտաւորապէս համապատասխանում են իրականութեան։ Սակայն, կասկած չկայ, որ կարծիքներով անհնար է թուեր ստուգել. ուստի և խնդրում ենք այն անձանց, որոնք հնարաւորութիւն ունին աւելի ստոյգ աղբիւրներից որևիցէ տեղեկութիւն տալու սոյն հետաքրքիր նիւթի մասին, չզլանան ասպարէզ դուրս գալ։

Մխիթար Վարդապետ

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ԱՐՇԱԼՈՒՍԻՆ

(Փ. Վ. Ֆարրար)

ԳԼՈՒԽ Ա.

Ագրիպպինայի իղձերն ու խորհուրդները

«Oramus, cae despuas, ocelle,
Ne poenas Nemesis reposcat a te:
Est vehemens Dea; laedere hanc caveto» *)
Catull. Carm. L, 18—20

Հռոմէական կեսարների պալատը մի չափազանց ընդարձակ և հոյակապ շինութիւն էր, որ կայսերների եշխանութեան

* Խնդրում ենք ձեզ վախեցիր բարեկամ,
որ չտայ ձեզ իւր պատիժը Նեմեզիդան.
բարկացող է աստուածուհին. զգուշացիր վիրաւորել նրան։